Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի N 218-Ն որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲԸԱՀՇՁԲ-10-15-1

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք.Երևան (կնքման վայրը) «28» 02 2018թվական

Մատակարարը՝ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Ի դեմս Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

Սպառողը՝ ՀՀ Պաշտպանության նախարարություն
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ.Կարապետյան
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. Մատակարարը պարտավոր է՝

1) Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) N2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միացիծ սխեմայի.

2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից

սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը.

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը.

5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն.

6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի.

7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները.

8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները.

9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում.

10) շուրջօրյա գործող 080000180 կամ 1-80 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ:

4. Մատակարարն իրավունք ունի՝

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

5. Սպառողը պարտավոր է՝

1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում.

2) մատակարարվող էլեկտրական էներգիան օգտագործել ոչ կենցաղային նշանակությամբ.

3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը.

4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին.

5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

6. Սպառողն իրավունք ունի՝

1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների.

2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար.

3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:

8. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական էներգիայի այդ քանակը:

9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

10. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:

11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի

սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:

12. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:

13. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

14. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:

15. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 14-րդ կետի:

4. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԷՄՕԿ-ով: Եթե սպառողի էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԷՄՕԿ-ով, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են սույն պայմանագրի N6 հավելվածում սահմանել այդ ժամանակահատվածը:

17. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:

18. Չի թույլատրվում այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:

19. Սպառողը և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի N 6 հավելվածում ամրագրել՝

1) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետներից տարբերվող էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանգեցնում բնակչության կամ այլ սպառողների համար ԷՄՕԿ-ով սահմանված էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման.

2) էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:

20. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում.

2) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել էլեկտրամատակարարվող տարածքում տեղակայված էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից.

3) եթե Սպառողը էլեկտրական էներգիան սպառել է առնտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առնտրային հաշվառքի սարքի շրջանցումով.

4) էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում.

5) սույն պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս էլեկտրական էներգիան սպառելու դեպքում.

6) էլեկտրական էներգիան սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:

21. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում.

2) էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ բացառությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերի.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

22. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և Հանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:

23. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս էլեկտրական էներգիայի մատակարարման սահմանափակումն ու դադարեցումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրի N6 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

24. Սպառողի էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող էլեկտրատեղակայանքների և առնտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

25. Սպառողի կողմից առնտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N 3 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

26. Սպառողի կողմից վերստուգիչ հաշվառքի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի N3 հավելվածում:

27. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:

28. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ (հավելված N1) ստանալու միջոցով՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

29. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

30. Եթե Սպառողի էլեկտրամատակարարումը իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

31. Սպառողի կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

32. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից էլեկտրաէներգիա սպառելու դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

33. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս-մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

34. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

35. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

36. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

37. Սույն պայմանագրի 36-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

38. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով: Պայմանագիրը բոլոր դեպքերում կնքվում է անորոշ ժամկետով, եթե ԷՄՕԿ-ով տվյալ դեպքի համար նախատեսված չէ ժամանակավոր պայմանագրի կնքում:

39. Սույն պայմանագրի 38-րդ կետի համաձայն ժամանակավոր պայմանագրի կնքման դեպքում ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Մատակարարի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, սույն պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով:

40. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

41. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

42. Սույն պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պայմանով, որ չեն հակասում սույն պայմանագրին, ԷՄՕԿ-ին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:

43. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

44. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

45. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

46. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:

47. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

48. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝

1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N1 հավելվածը.

2) Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N2 հավելվածը,

3) Սպառողի (Ենթասպառողի) առնտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N3 հավելվածը.

4) Սպառողի (Ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ N4 հավելվածը.

5) Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտի մասին N5 հավելվածը.

6) 0.4 կՎ և բարձր լարման սպառողների համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N6 հավելվածը:

12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար՝	Սպառող՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	ՀՀ Պաշտպանության նախարարություն
Գտնվելու վայրը՝	Գտնվելու վայրը՝
Ք. Երևան Արմենակյան 127	ք. Երևան, Բագրևանդ 5
Հեռախոս +374 10 65 00 86	Ծանուցման հասցեն՝
Էլ. փոստ office@ena.am	ք. Երևան, Բագրևանդ 5
ՀՎՀՀ 01520882	Էլ. փոստ
Հ/հ 2474663150140080	Հեռախոս +374 10 29 44 01
Բանկ «Արդշինբանկ» ՓԲԸ	ՀՎՀՀ 02703824
Գործունեության լիցենզիա N0092	
Գլխավոր տնօրեն Ա. Հարությունյան	Բանկ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
(ստորագրություն, անուն, ազգանուն)	Հ/հ 900011117034
Կ. Տ. (առկայության դեպքում)	Կ. Կարապետյան (ստորագրություն, անուն, ազգանուն)
	Կ. Տ. (առկայության դեպքում)

0.4ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Կողմերը պարտավոր են սույն պայմանագրին կցել անբաժանելի մաս հանդիսացող տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտը, որը կազմվում է համաձայն ԷՄՕԿ-ով սահմանված կարգի:
2. Երբ նվազագույն բեռնվածքի ռեժիմներում տեխնիկապես անհնար է առևտրային հաշվառքի սարքերի բնականոն աշխատանքը, սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվարկվում է նվազագույն բեռնվածքի ամբողջ ժամանակահատվածում փաստացի միացված էլեկտրական ընդունիչների հզորության հիման վրա և ավելացվում առևտրային հաշվիչի ցուցմունքով հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:
3. Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանազատման կետերում տեղադրել էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր, որի վերաբերյալ կազմում են երկկողմանի ակտ և կցում սույն պայմանագրին:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրա- էներգիայի որակը խախտելու դեպքում պատճառները և որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման ժամանակահատվածը որոշվում են Մատակարարի կամ Սպառողի չափիչ սարքերի գրանցումներով, իսկ այդ սարքերի բացակայության դեպքում՝ համապատասխան հաշվարկներով, Մատակարարի և Սպառողի օպերատիվ փաստաթղթերի գրառումների հիման վրա: Այդ մասին Մատակարարը և Սպառողը կազմում են երկկողմանի ակտ:
5. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար Մատակարարը փոխհատուցում է Սպառողի կրած վնասը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
6. Սպառողի (բացառությամբ բնակչության) սարքավորումները, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքները մատակարարի օպերատիվ ենթակայությանը հանձնելու դեպքում Կողմերը պարտավոր են այն իրականացնել ԷՄՕԿ-ով սահմանված՝ «Մատակարարի և Սպառողի (բացառությամբ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների» կարգով:
7. Սպառողը պարտավոր է.
   1) ապահովել փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող Մատակարարի օպերատիվ անձնակազմի շուրջօրյա անարգել մուտքը իր տնօրինության տակ գտնվող տարածքները՝ իրենց իրավասությունների սահմաններում պարտականությունների կատարման նպատակով.
   2) անհապաղ հայտնել Մատակարարին նրա օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումներում և ռելեական պաշտպանության ու ավտոմատիկայի սարքվածքներում ի հայտ եկած բոլոր թերությունների և անսարքությունների մասին 080000180 հեռախոսահամարով:
8. Սպառողը պարտավոր է չգերազանցել սույն պայմանագրի N4 հավելվածով սահմանված առավելագույն թույլատրելի հզորությունը, ինչպես նաև Մատակարարի հետ համաձայնեցնել առավելագույն թույլատրելի հզորության փոփոխությունը:
9. Մատակարարը որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար պատասխանատվություն չի կրում այն ժամանակահատվածում, որի ընթացքում Սպառողը գերազանցել է առավելագույն թույլատրելի հզորությունը:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԼՐԱՑՆՈՒՄ ԵՆ ԿՈՂՄԵՐԸ)

10. Սպառողի ստորաբաժանումների անվանումը, քարտերի համարները և նրանց համապատասխան սպասարկող Մատակարարի տնօրինությունների, մասնաճյուղերի էլեկտրացանցերի, անվանումները (այսուհետ Կառուցվածքային ստորաբաժանումների) նշված են սույն պայմանագրի Հավելված N6-ին կից ցանկում:
11. Սույն պայմանագրով Մատակարարը պարտավորվում է էլեկտրաէներգիա մատակարարել Սպառողին սույն պայմանագրի հավելված N6-ի կից ցանկում ընդգրկված նրա ստորաբաժանումներին:
12. Հավելված N6-ին կից ցուցակում նշված Սպառողի ստորաբաժանումների ցանկը կարող է փոփոխվել Սպառողի գրությունների հիման վրա:
13. Սույն պայմանագրի հավելված 6-ին կից անբաժանելի մաս են կազմում.
    - Էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության գնման ժամանակացույցը (նշելով ընթացիկ տարին):
    - Էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության վճարման ժամանակացույցը (նշելով ընթացիկ տարին):
14. Մատակարարը սույն պայմանագրից բխող իր պարտականությունները իրականացնում է իր Կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:
15. Մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 11-ը մատակարարը սույն պայմանագրում նշված Սպառողի էլեկտրոնային փոստին ուղարկում է հավելված 6-ի կից ցանկում նշված բոլոր ստորաբաժանումների հաշվետու ամսվա էլեկտրաէներգիայի ծախսերի, վճարումների և մնացորդների վերաբերյալ ամփոփ ակտը և էլեկտրոնային հարկային հաշիվը (ամփոփ), որը հիմք է հանդիսանում Սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում կատարելու համար:
16. Սպառողը մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց պարտավորվում է մատակարարին կենտրոնացված կարգով վճարել էլեկտրոնային ամփոփ հաշիվը ստանալուց 7 օրվա ընթացքում՝ տալով համապատասխան բաշխում ըստ իր ստորաբաժանումների:
17. Սույն պայմանագրի 31 կետով սահմանված Սպառողի նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրաէներգիայի արժեքի չվճարած գումարի նկատմամբ տույժի հաշվարկը մատակարարը սկսում է պարտավորությունների ժամկետներին հաջորդող ամսվա 1-ից, յուրաքանչյուր ուշացած օրվա համար չվճարած գումարի 0.02% չափով:
18. Կողմերը պայմանավորվում և հաստատում են, որ պայմանագրին կից N1, N2, N3, N4, N5 հավելվածները կնքվում են իրենց ստորաբաժանումների կողմից՝ բնօրինակները պահպանելով ստորաբաժանումներում:
19. Եթե կողմերից մեկը հայտնում է ցանկություն փոփոխություններ մտցնել սույն պայմանագրի հավելված 6-ի այլ պայմաններում, ապա այդ մասին գրավոր տեղեկացնում է մյուս կողմին: Փոփոխությունները ներառվում են պայմանագրում լրացուցիչ համաձայնագրով:
20. Սույն պայմանագրի պայմանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի երկրորդ մասին համապատասխան կիրառվում են 2018թ. հունվարի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
21. _____

Մատակարար՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	Սպառող՝ ՀՀ Պաշտպանության նախարարություն
Գլխավոր տնօրեն	ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ՝
_____ Կ. Հարությունյան (ստորագրություն, անուն, ազգանուն)	_____ Կ. Կարապետյան (ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ. Տ.	Կ. Տ.

«28» 02 2018թ. կնքված
ՊԲԸԱՀԾՁԲ-10-15-1 էլեկտրական էներգիայի
մատակարարման պայմանագրի հավելված 6-ին կից

ՑԱՆԿ
«ՀԷՑ» ՓԲԸ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

հ/հ	ID	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
1	488111	3230018	70839	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
2	816111	3111099	55035	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
3	1361112	5090689	43755	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
4	1391112	0328315	76852	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
5	1600112	1001275	32822-1	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
6	1704112	4600010	80088	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
7	1706112	7700008	79512	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
8	1730111	0284156	27229	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
9	1805111	2013005	51191	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
10	1819112	0285541	45529	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
11	1841112	0287978	60925	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
12	1872112	0286076	29500	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
13	1874112	0286233	43755	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
14	1880112	0288765	26040	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
15	1881112	0288768	40359	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
16	1959112	0315788	43755	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
17	2033112	5820094	36945	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
18	2200112	3220501	53661	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
19	2319112	0287656	56265	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
20	2340112	0283310	ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Զ/Կ	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
21	2376112	0291586	95414	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
22	2471112	4006803	31549	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
23	2506112	0285624	83117	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
24	2585112	7111106	53661	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
25	2599112	0294054	50869	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
26	2630112	0311197	94492	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
27	2766112	5130073	31233	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
28	2889112	3137004	73014	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
29	2915112	0307674	95414	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
30	3069112	0284041	32236	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
31	3097112	0288719	45077	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
32	3103112	0279456	51054	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք
33	3104112	0279461	93353	ԽՄՍՏ «Գործարանային մարզային» տարածք

34	3252112	6006108	59016	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
35	3322112	6051007	72035	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
36	3327112	6101463	96583	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
37	3523112	0377421	60369	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
38	3536112	0287894	83117	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
39	3565112	0286988	54122	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
40	3604112	0285607	40861	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
41	3668112	0283377	60913	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
42	3669112	0283596	32424	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
43	3670112	0283735	53922	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
44	3754112	0285993	72207	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
45	3766112	0299453	63853	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
46	3776112	0377363	51556	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
47	3838112	0318541	40359	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
48	3907112	7051002	63853	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
49	8397022	0279278	18120	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
50	12070111	3130005	55076	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
51	13607111	0377666	83117	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
52	17879111	0373595	54809	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
53	37983059	9130004	43755	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
54	38027059	8130145	24437	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
55	38676059	3130008	83580	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
56	1796009	8230060	95532	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
57	2022009	4990721	42285	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
58	2031009	4990720	24236	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
59	2555009	8100672	25149	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
60	2610009	8100671	26338	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
61	2620009	8100670	80088	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
62	2789009	3880706	32822-1	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
63	2802009	2887069	32822-2	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
64	2889009	3222400	74352	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
65	2943009	5880542	10724	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
66	2946009	4880708	61482	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
67	2961009	3222435	59559	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
68	3030009	3880449	10724	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
69	3042009	3111228	50552	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
70	3079009	6005247	55537	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
71	3105009	7276062	98360	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
72	3131009	2008302	38451	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
73	3141009	4880691	14203	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
74	3317009	4880692	57454	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
75	3318009	3880693	93353	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք

76	3382009	1882324	51054	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
77	4845009	6882125	24923	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
78	6113009	6883371	55763	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
79	6181009	9275159	14203	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
80	180008	8350020	55763	ԽՍՍՏ «ՈՒղիղ սպառիչ»
81	404008	1998707	25149	ԽՍՍՏ «ՈՒղիղ սպառիչ»
82	71898004	6000708	31549 09	Կենտրոն ՏՀՏ «Արաբկիր» տարածք
83	71901004	0318846	ՄԱՅՐ ՀԱՅ 07	Կենտրոն ՏՀՏ «Արաբկիր» տարածք
84	71902004	0318847	ՀՀ ԶԿ 07	Կենտրոն ՏՀՏ «Արաբկիր» տարածք
85	71903004	0318878	ԱՐԱԲԿ Զ/Կ 07	Կենտրոն ՏՀՏ «Արաբկիր» տարածք
86	74441004	4700672	88865 05	Կենտրոն ՏՀՏ «Արաբկիր» տարածք
87	74623004	6008721	19450 07	Կենտրոն ՏՀՏ «Արաբկիր» տարածք
88	75837004	2009977	24923 09	Կենտրոն ՏՀՏ «Արաբկիր» տարածք
89	39109002	3111468	ԶԻՆՎՈՐԻ ՄԱՅՐ	Կենտրոն ՏՀՏ «Էրեբունի» տարածք
90	39121002	4300268	14203	Կենտրոն ՏՀՏ «Էրեբունի» տարածք
91	39732002	4880690	ԷՐԵԲՈՒՆԻ Զ/Կ	Կենտրոն ՏՀՏ «Էրեբունի» տարածք
92	39813002	0318389	54574	Կենտրոն ՏՀՏ «Էրեբունի» տարածք
93	40421002	1230676	14203	Կենտրոն ՏՀՏ «Էրեբունի» տարածք
94	41076002	4267096	55763	Կենտրոն ՏՀՏ «Էրեբունի» տարածք
95	33272001	0331364	29632	Կենտրոն ՏՀՏ «Կենտրոն» տարածք
96	33485001	8111227	«53344»	Կենտրոն ՏՀՏ «Կենտրոն» տարածք
97	34829001	9265403	29632	Կենտրոն ՏՀՏ «Կենտրոն» տարածք
98	38445001	3230147	ՀՀՊՆ ԿԵՆՏՐՈՆ.Զ/Կ	Կենտրոն ՏՀՏ «Կենտրոն» տարածք
99	80618005	6010089	ՄԱՇՏՈՑ Զ/Կ	Կենտրոն ՏՀՏ «Մաշտոց» տարածք
100	81925005	6100254	55763	Կենտրոն ՏՀՏ «Մաշտոց» տարածք
101	82493005	5111244	ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Զ/Կ	Կենտրոն ՏՀՏ «Մաշտոց» տարածք
102	82735005	3880920	20440	Կենտրոն ՏՀՏ «Մաշտոց» տարածք
103	83427005	8222402	90999	Կենտրոն ՏՀՏ «Մաշտոց» տարածք
104	53456006	8990722	Ն.Ն Զ/Կ 011	Կենտրոն ՏՀՏ «Նոր Նորք» տարածք
105	55476006	6333483	55763 011	Կենտրոն ՏՀՏ «Նոր Նորք» տարածք
106	39073007	9010068	ՇԵՆԳԱՎԻԹ Զ/Կ	Կենտրոն ՏՀՏ «Շենգավիթ» տարածք
107	39350007	2005247	55537	Կենտրոն ՏՀՏ «Շենգավիթ» տարածք
108	39374007	6880662	55763	Կենտրոն ՏՀՏ «Շենգավիթ» տարածք
109	40736007	3880039	59559	Կենտրոն ՏՀՏ «Շենգավիթ» տարածք
110	41358007	3991003	32822	Կենտրոն ՏՀՏ «Շենգավիթ» տարածք
111	41414007	2391456	51054	Կենտրոն ՏՀՏ «Շենգավիթ» տարածք
112	37615059	8205003	ԿՈՏԱՅՔԻ Զ/Կ	«Գեղամա» մ/ճ «Աբովյան» էլ.ցանց
113	37984059	8130005	55076	«Գեղամա» մ/ճ «Աբովյան» էլ.ցանց
114	39845059	3515004	95532	«Գեղամա» մ/ճ «Աբովյան» էլ.ցանց
115	15208044	6000271	ԳԱՎԱՌԻ Զ/Կ	«Գեղամա» մ/ճ «Գավառ» էլ.ցանց
116	15211044	0291549	40359	«Գեղամա» մ/ճ «Գավառ» էլ.ցանց
117	19643050	3001623	ՀՐԱԶԴԱՆԻ Զ/Կ	«Գեղամա» մ/ճ «Հրազդան» էլ.ցանց

118	4948035	7005047	Զ/Կ ՃԱՄԲԱՐԱԿԻ	«Գեղամա» մ/ճ «Ճամբարակ» էլ.ցանց
119	4956035	4005167	25836	«Գեղամա» մ/ճ «Ճամբարակ» էլ.ցանց
120	4963035	5005176	53707	«Գեղամա» մ/ճ «Ճամբարակ» էլ.ցանց
121	5205035	4006207	84682	«Գեղամա» մ/ճ «Ճամբարակ» էլ.ցանց
122	18033038	0283768	ՄԱՐՏՈՒՆՈՒ Զ/Կ	«Գեղամա» մ/ճ «Մարտունի» էլ.ցանց
123	18034038	0283994	32236	«Գեղամա» մ/ճ «Մարտունի» էլ.ցանց
124	18322038	0285125	53159	«Գեղամա» մ/ճ «Մարտունի» էլ.ցանց
125	19184038	0326479	28233	«Գեղամա» մ/ճ «Մարտունի» էլ.ցանց
126	19629038	6320018	28233	«Գեղամա» մ/ճ «Մարտունի» էլ.ցանց
127	10675023	0279496	43755	«Գեղամա» մ/ճ «Նաիրի» էլ.ցանց
128	10692023	0307983	80088	«Գեղամա» մ/ճ «Նաիրի» էլ.ցանց
129	10891023	0279546	ՆԱԻՐԻԻ Զ/Կ	«Գեղամա» մ/ճ «Նաիրի» էլ.ցանց
130	13217056	0284266	55261	«Գեղամա» մ/ճ «Նաիրի» էլ.ցանց
131	13362056	0287666	56265	«Գեղամա» մ/ճ «Նաիրի» էլ.ցանց
132	11464041	0377351	ՍԵՎԱՆԻ Զ/Կ	«Գեղամա» մ/ճ «Սևան» էլ.ցանց
133	11485041	0286052	32236	«Գեղամա» մ/ճ «Սևան» էլ.ցանց
134	9764047	6006074	ՎԱՐԴԵՆԻՍԻ Զ/Կ	«Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց
135	9778047	2006123	53701	«Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց
136	10009047	1006109	32236	«Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց
137	10015047	9006153	28233	«Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց
138	10268047	7006016	28418	«Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց
139	10313047	9006045	59016	«Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց
140	10366047	6006152	62426	«Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց
141	8472017	7600016	29500	«Մուսալեռ» մ/ճ «Աշտարակ» էլ.ցանց
142	8495017	5700005	80088	«Մուսալեռ» մ/ճ «Աշտարակ» էլ.ցանց
143	8496017	6700006	54850	«Մուսալեռ» մ/ճ «Աշտարակ» էլ.ցանց
144	8498017	6700008	79512	«Մուսալեռ» մ/ճ «Աշտարակ» էլ.ցանց
145	8658017	8500007	ԱՇՏԱՐԱԿԻ Զ/Կ	«Մուսալեռ» մ/ճ «Աշտարակ» էլ.ցանց
146	6613021	0283741	ԱՊԱՐԱՆԻ Զ/Կ	«Մուսալեռ» մ/ճ «Ապարան» էլ.ցանց
147	25140032	0278321	ԱՐՄԱՎԻՐԻ Զ/Կ	«Մուսալեռ» մ/ճ «Արմավիր» էլ.ցանց
148	26654032	0285947	86365	«Մուսալեռ» մ/ճ «Արմավիր» էլ.ցանց
149	11032027	0285544	45529	«Մուսալեռ» մ/ճ «Բաղրամյան» էլ.ցանց
150	11130027	0285994	86365	«Մուսալեռ» մ/ճ «Բաղրամյան» էլ.ցանց
151	12393016	0337636	55763	«Մուսալեռ» մ/ճ «Բյուրական» էլ.ցանց
152	12571016	1500255	45529	«Մուսալեռ» մ/ճ «Բյուրական» էլ.ցանց
153	36661025	0285679	ԷՋՄԻԱԾԻՆԻ Զ/Կ	«Մուսալեռ» մ/ճ «Էջմիածին» էլ.ցանց
154	36677025	0286173	13516	«Մուսալեռ» մ/ճ «Էջմիածին» էլ.ցանց
155	36678025	0286197	41096	«Մուսալեռ» մ/ճ «Էջմիածին» էլ.ցանց
156	36719025	0288199	52265	«Մուսալեռ» մ/ճ «Էջմիածին» էլ.ցանց
157	39613025	0330606	15166	«Մուսալեռ» մ/ճ «Էջմիածին» էլ.ցանց
158	39904025	6820061	43755	«Մուսալեռ» մ/ճ «Էջմիածին» էլ.ցանց
159	9169015	8200017	ԹԱԼԻՆԻ Զ/Կ	«Մուսալեռ» մ/ճ «Թալին» էլ.ցանց

160	9571015	9400314	55763	«Մուսալեռ» մ/ճ «Թալին» էլ.ցանց
161	22401058	0328287	35412	«Արաքս» մ/ճ «Արարատ» էլ.ցանց
162	22403058	0328295	ԱՐԱՐԱՏԻ Զ/Կ	«Արաքս» մ/ճ «Արարատ» էլ.ցանց
163	22410058	0328321	58831	«Արաքս» մ/ճ «Արարատ» էլ.ցանց
164	25881055	0279583	32277	«Արաքս» մ/ճ «Արտաշատ» էլ.ցանց
165	25908055	0285260	ԱՐՏԱՇԱՏԻ Զ/Կ	«Արաքս» մ/ճ «Արտաշատ» էլ.ցանց
166	26404055	0327141	43755	«Արաքս» մ/ճ «Արտաշատ» էլ.ցանց
167	10686034	0285899	27527	«Արաքս» մ/ճ «Եղեգնաձոր» էլ.ցանց
168	10687034	0285935	ԵՂԵԳՆԱՁՈՐԻ Զ/Կ	«Արաքս» մ/ճ «Եղեգնաձոր» էլ.ցանց
169	10688034	0285956	70179	«Արաքս» մ/ճ «Եղեգնաձոր» էլ.ցանց
170	11438034	0285988	25149	«Արաքս» մ/ճ «Եղեգնաձոր» էլ.ցանց
171	23471052	8000435	ՄԱՍԻՍԻ Զ/Կ	«Արաքս» մ/ճ «Մասիս» էլ.ցանց
172	24366052	6090369	32822	«Արաքս» մ/ճ «Մասիս» էլ.ցանց
173	7025063	0329582	ՎԱՅՔԻ Զ/Կ	«Արաքս» մ/ճ «Վայք» էլ.ցանց
174	7078063	8002170	70179	«Արաքս» մ/ճ «Վայք» էլ.ցանց
175	7103063	3002215	24647	«Արաքս» մ/ճ «Վայք» էլ.ցանց
176	8315026	8000205	53620	«Դեբեդ» մ/ճ «Գուգարք» էլ.ցանց
177	8389026	0299471	63853	«Դեբեդ» մ/ճ «Գուգարք» էլ.ցանց
178	16133033	0283349	ԹՈՒՄԱՆՅԱՆԻ Զ/Կ	«Դեբեդ» մ/ճ «Թումանյան» էլ.ցանց
179	12008011	0284272	ՍՊԻՏԱԿԻ Զ/Կ	«Դեբեդ» մ/ճ «Սպիտակ» էլ.ցանց
180	9575012	0377321	ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ Զ/Կ	«Դեբեդ» մ/ճ «Ստեփանավան» էլ.ցանց
181	36230039	2051001	37082	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
182	36231039	2051005	ՎԱՆԱՁՈՐԻ Զ/Կ	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
183	36428039	4051003	40133	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
184	36429039	6051008	37082	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
185	36431039	4051012	37082	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
186	36432039	2051013	37082	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
187	36565039	4051000	56039	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
188	36979039	8051007	72035	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
189	37864039	0323656	22083	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
190	8185036	0285554	ՏԱՇԻՐԻ Զ/Կ	«Դեբեդ» մ/ճ «Տաշիր» էլ.ցանց
191	10837057	6220001	69334	«Ղարս» մ/ճ «Ախուրյան» էլ.ցանց
192	10838057	8220007	ԱԽՈՒՐՅԱՆԻ Զ/Կ	«Ղարս» մ/ճ «Ախուրյան» էլ.ցանց
193	11142057	5220609	20876	«Ղարս» մ/ճ «Ախուրյան» էլ.ցանց
194	2068045	3240137	ԱՄԱՍԻԱՅԻ Զ/Կ	«Ղարս» մ/ճ «Ամասիա» էլ.ցանց
195	6208051	9210018	69334	«Ղարս» մ/ճ «Անի» էլ.ցանց
196	6209051	3210038	ԱՆԻԻ Զ/Կ	«Ղարս» մ/ճ «Անի» էլ.ցանց
197	6287051	8210074	25149	«Ղարս» մ/ճ «Անի» էլ.ցանց
198	6339051	6210137	55035	«Ղարս» մ/ճ «Անի» էլ.ցանց
199	2704048	6250018	ԱՇՈՑՔԻ Զ/Կ	«Ղարս» մ/ճ «Աշոցք» էլ.ցանց
200	12744054	6230018	70839	«Ղարս» մ/ճ «Արթիկ» էլ.ցանց
201	12745054	8230019	ԱՐԹԻԿԻ Զ/Կ	«Ղարս» մ/ճ «Արթիկ» էլ.ցանց

202	12746054	7230118	43893	«Ղարս» մ/ճ «Արթիկ» էլ.ցանց
203	45883042	9120063	43893	«Ղարս» մ/ճ «Գյումրի» էլ.ցանց
204	46394042	7111096	14244	«Ղարս» մ/ճ «Գյումրի» էլ.ցանց
205	46395042	7111098	40359	«Ղարս» մ/ճ «Գյումրի» էլ.ցանց
206	46396042	7111099	55035	«Ղարս» մ/ճ «Գյումրի» էլ.ցանց
207	46397042	6111101	56952	«Ղարս» մ/ճ «Գյումրի» էլ.ցանց
208	46524042	9111106	53661	«Ղարս» մ/ճ «Գյումրի» էլ.ցանց
209	46683042	2111995	ԳՅՈՒՄՐԻ Զ/Կ	«Ղարս» մ/ճ «Գյումրի» էլ.ցանց
210	10766049	0377424	60369	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
211	10767049	0288587	41824	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
212	10768049	0288612	32424	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
213	10769049	0288657	ԳՈՐԻՍԻ Զ/Կ	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
214	10884049	8000348	16396	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
215	10989049	0287890	83117	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
216	10992049	0287981	53922	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
217	10993049	0289613	31549	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
218	16110043	0285620	83117	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
219	16163043	0287003	54122	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
220	16281043	0285610	40861	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
221	16282043	0285682	32373	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
222	16479043	0292262	41322	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
223	16725043	0288784	ԿԱՊԱՆԻ Զ/Կ	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
224	17027043	8000389	16396	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
225	17550043	0285658	20666	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
226	4218040	0283985	ՄԵՂՐՈՒ Զ/Կ	«Տաթև» մ/ճ «Մեղրի» էլ.ցանց
227	4222040	0289072	24647	«Տաթև» մ/ճ «Մեղրի» էլ.ցանց
228	4234040	0285894	50869	«Տաթև» մ/ճ «Մեղրի» էլ.ցանց
229	8829037	0283396	60913	«Տաթև» մ/ճ «Սիսիան» էլ.ցանց
230	8830037	0283397	41322	«Տաթև» մ/ճ «Սիսիան» էլ.ցանց
231	8831037	0283519	70011	«Տաթև» մ/ճ «Սիսիան» էլ.ցանց
232	8833037	0283748	53922	«Տաթև» մ/ճ «Սիսիան» էլ.ցանց
233	8834037	0283751	37564	«Տաթև» մ/ճ «Սիսիան» էլ.ցանց
234	8835037	0283898	ՍԻՍԻԱՆԻ Զ/Կ	«Տաթև» մ/ճ «Սիսիան» էլ.ցանց
235	9760037	0319568	25149	«Տաթև» մ/ճ «Սիսիան» էլ.ցանց
236	3116046	0291645	50869	«Տաթև» մ/ճ «Քաջարան» էլ.ցանց
237	9662018	0287035	51036	«Աղստև» մ/ճ «Բերդ» էլ.ցանց
238	9663018	0287041	22783	«Աղստև» մ/ճ «Բերդ» էլ.ցանց
239	9664018	0287146	ՏԱՎՈՒՇԻ Զ/Կ	«Աղստև» մ/ճ «Բերդ» էլ.ցանց
240	10419018	0286980	25149	«Աղստև» մ/ճ «Բերդ» էլ.ցանց
241	10426018	0287602	17193	«Աղստև» մ/ճ «Բերդ» էլ.ցանց
242	10427018	0287633	21127	«Աղստև» մ/ճ «Բերդ» էլ.ցանց
243	8402022	0279445	41507	«Աղստև» մ/ճ «Դիլիջան» էլ.ցանց

244	8422022	0284101	14172	«Աղստև» մ/ճ «Դիլիջան» էլ.ցանց
245	8450022	0285926	ԴԻԼԻՋԱՆԻ Զ/Կ	«Աղստև» մ/ճ «Դիլիջան» էլ.ցանց
246	8483022	0287143	23734	«Աղստև» մ/ճ «Դիլիջան» էլ.ցանց
247	8497022	0287551	37082	«Աղստև» մ/ճ «Դիլիջան» էլ.ցանց
248	8498022	0287574	94492	«Աղստև» մ/ճ «Դիլիջան» էլ.ցանց
249	8573022	2490051	81151	«Աղստև» մ/ճ «Դիլիջան» էլ.ցանց
250	12942024	9013005	51191	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
251	12943024	9013006	25149	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
252	12944024	7012920	ԻՋԵՎԱՆԻ Զ/Կ	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
253	13229024	6012919	23734	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
254	13444024	4014225	74472	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
255	13666024	5014345	80088	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
256	16197111	0356286	37082	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
257	20342111	0356334	28073	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
258	9478020	0284139	27229	«Աղստև» մ/ճ «Նոյեմբերյան» էլ.ցանց
259	9479020	0284170	ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ Զ/Կ	«Աղստև» մ/ճ «Նոյեմբերյան» էլ.ցանց
260	10473020	0288949	25149	«Աղստև» մ/ճ «Նոյեմբերյան» էլ.ցանց
261	10948020	0291083	23734	«Աղստև» մ/ճ «Նոյեմբերյան» էլ.ցանց

Մատակարար՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.

Սպառող՝
ՀՀ Պաշտպանության նախարարություն

ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ՝

Կ. Կարապետյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«28» 02 2018թ. կնքված ՊԲՀԱՀԾՁԲ-10-15-1 էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան *«28» 02 2018թ.*

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է Մատակարարի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Պաշտպանության նախարարությունը, այսուհետ՝ «Սպառող», ի դեմս ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԾԿ Կ. Կարապետյանի, ով գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր», գործելով ՀՀ օրենսդրության հիման վրա, հիմք ընդունելով Կողմերի միջև «28» 02 2018թ կնքված ՊԲՀԱՀԾՁԲ-10-15-1 էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր), հետևյալի մասին.

1. *Համաձայն սույն համաձայնագրին կից թիվ 1 և թիվ 2 հավելվածների հաստատել էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրին կից 6-րդ հավելվածի 13-րդ կետում նշված.*
   - Էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության գնման ժամանակացույցը 2018թ համար:
   - Էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության վճարման ժամանակացույցը 2018թ համար:
2. *ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով սույն համաձայնագրի դրույթները կիրառվում են 2018թ. հունվարի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:*
3. *Համաձայնագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:*
4. *Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:*

Մատակարար՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝

(ստորագրություն) *Կ. Հարությունյան*
(ստորագրության անուն, ազգանուն)

Պ.Տ.

Սպառող՝
ՀՀ Պաշտպանության նախարարություն

ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԾԿ՝

(ստորագրություն) *Կ. Կարապետյան*
(ստորագրության անուն, ազգանուն)

Պ.Տ.

Հավելված թիվ 1
«28» 02 2018թ.
կնքված համաձայնագրի

«28» 02 2018թ. կնքված
N ԲՀԱՀՇՁԲ-10-15-1 Էլեկտրական էներգիայի
մատակարարման պայմանագրի հավելված 6-ին կից

2018թ. ընթացքում էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության գնման ժամանակացույց

Ծառայության անվանումը	Չափի միավորը	Գնում ըստ ամիսների												
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայություն	հազ. կՎտ. ժամ	7300.0	6800.0	5700.0	4500.0	3500.0	3100.0	3100.0	3100.0	3300.0	4300.0	5900.0	8558.0	59158.0

Մատակարար՝
«Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն

Կ. Հարությունյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Սպառող՝
ՀՀ Պաշտպանության նախարարություն

ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ՝

Կ. Կարապետյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.

Հավելված թիվ 2
«28» 02 2018թ.
կնքված համաձայնագրի

«28» 02 2018թ. կնքված
N ԲՀԱՀՇՁԲ-10-15-1 էլեկտրական
էներգիայի մատակարարման
պայմանագրի հավելված 6-ին կից

2018թ. ընթացքում էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության վճարման ժամանակացույց

Ծառայության անվանումը	Չափի միավորը և գումարը	Գումարն ըստ ամիսների (ՀՀ դրամ) առողջական													Վճարումը
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը	
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր		
Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայություն	հազ. դրամ 2117385.6	0	580000.0	263500.0	156500.0	142000.0	167200.0	88800.0	128000.0	183400.0	128600.0	141000.0	138385.6	2117385.6	Ըստ փաստացի ծախսի

Մատակարար՝
«Տարածքային էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն

Կ. Հարությունյան
(ազգանուն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Սպառող՝
ՀՀ Պաշտպանության նախարարություն

ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ՝

Կ. Կարապետյան
(ազգանուն, անուն, ազգանուն)

Կ. Տ.